

Ճառներն էին Սոյ, Էջմիածնի, Երուսաղեմի Աթոռներէն հեռացուցուած կաթողիկոսներ ու Պատրիարքներ, եւ Էջմիածնի դրամահաւաք նուիրակներ, որոնց հետ սկսան սաստկութեամբ մրցիլ տեղական վարդապետներ, նաեւ պարզ քահանաներ, եւ նոյն իսկ դերձակ, հացագործ ջրկիր եւ բաղնեպան աշխարհականներ: Մեծ դեր կը խաղային նաեւ անձնական, տեղական եւ կրօնական կուսակցութիւններ, որոնք կարգաւ սոյն Աթոռին առջեւէն կ'անցնէին, երբեմն եւ ոչ իսկ շաբաթ մը նստելու միջոց ունենալով:

Նաեւ 1664—1680 Էջմիածնի Յակոբ եւ ասոր հակառակաթոռ Եղիազար կաթողիկոսներու կուսակիցներուն արիւնահեղ ճակատամարտերուն հանդիսավայրն էր Կ.Պոլիս, ուր Պատրիարքական Աթոռոյն կռիւներուն հետ՝ կաթողիկոսական Աթոռոյ կռիւներն ալ միաժամանակ կը մղուէին սաստկութեամբ՝ մահացու զէնքերով: 1690էն բաւական տարիներ յառաջ խմբուեցան նաեւ կաթողիկէ Հայերը, յատուկ կաթուղիկ անուանակոչութեամբ. բայց այս խմբիներու մէջ ասոնց ունեցած դերը տակաւին ծանօթ չէ: Ասոնք 1698էն ետեւ սկսան վերստին հետամուտ ըլլալ Պատրիարքական Աթոռոյն, եւ այն ատեն բոլոր ազգին զէնքերն ասոնց դէմ դարձան, մահացու հալածմունքներու սկիզբն եղաւ, եւ այսուհետեւ Հայերու ներքին կռիւները մեղմացան: Տէրութիւնն ալ, թագաւորէն սկսեալ մինչեւ յետին պաշտօ-